ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«---» հոկտեմբերի 2011թ. **N----Ա**

«ԵՐԵՎԱՆԻ «ԺԱՄԱՆՑ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով.

Երևան քաղաքի ավագանին *որոշում է.*

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լուծարել «Երևանի «Ժամանց» մշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ Կազմակերպություն):

2. Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում ստեղծել լուծարային հանձնաժողով:

3. Լուծարային հանձնաժողովին՝ 3-ամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ավարտել Կազմակերպության լուծարման գործընթացը և 20-օրյա ժամկետում լուծարումից հետո մնացած գույքը հանձնել «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի տնօրինությանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ -ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆԻ «ԺԱՄԱՆՑ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Երևանի «Ժամանց» մշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը տեղակայված է Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի վարչական շենքում (մեկ սենյակում): Տարիներ շարունակ կազմակերպել է Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում կազմակերպվող մշակութային միջոցառումները: Մշակութային միջոցառումների կազմակերպման ժամանակ անհրաժեշտ ապրանքների և ծառայությունների ձեռքբերումը համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը պարտավոր էր իրականացնել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան: Սակայն օրենքի պահանջների կիրառումը հաճախ դառնում էր անհնարին: Ներկայումս Երևանի քաղաքապետարանի գնումների կազմակերպման իրավասությունը դրված է աշխատակազմի գնումների վարչության վրա և ըստ այդմ, «Երևանի «Ժամանց» մշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից մշակութային միջոցառումների կազմակերպումը դառնում է անիմաստ:

2011 թվականի ընթացքում «Երևանի «Ժամանց» մշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը լիարժեք չի գործել, այլ գործունեությամբ չի զբաղվել և տարածք չունենալու հետևանքով չէր էլ կարող զբաղվել:

Այսպիսով, կազմակերպության գործունեության արդյունավետությունը շատ ցածր է եղել, որի հետևանքով անհրաժեշտություն է առաջացել լուծարել «Երևանի «Ժամանց» մշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

««ԵՐԵՎԱՆԻ «ԺԱՄԱՆՑ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Երևանի «Ժամանց» մշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության լուծարման մասին Երևան քաղաքի ավագանու որոշման ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

««ԵՐԵՎԱՆԻ «ԺԱՄԱՆՑ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևանի «Ժամանց» մշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության լուծարման մասին Երևան քաղաքի ավագանու որոշման ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ